



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 148644 «29 08 2018.

2017/2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Հաստատել 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը: Բոլոր ստորաբաժանումներին՝ խստրեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա ռեկտորատի նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանի և ուսումնամեթոդական վարչության պետ, պրոռեկտորի տեղակալ Հ.Գ. Ժամփարյանի վրա:

Ուժությունը՝

Ա.Հ. Սիմոնյան

1. 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույց

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման բոլոր կուրսերի 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել դեկտեմբերի 29-ին:

2. 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել դեկտեմբերի 22-ից - 29-ը:

3. Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել հունվարի 8-ից 27-ը:

4. 2017/2018 ուստարվա առաջին կիսամյակի վճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին և անվանական ցուցակները զեկուցազրի ձևով ներկայացնել ուս. վարչություն մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը:

5. Պարտքերի մարում սահմանել՝

ա/ առաջին լուծարքային շրջան՝ փետրվարի 6-ից փետրվարի 15-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ փետրվարի 22-ից մարտի 1-ը,

6. 2017/2018 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա ուսուցման ուսումնական պարապմունքները սկսել փետրվարի 5-ից:

7. Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասերը կազմակերպել նոյեմբերի 1-ից մինչև հունվարի 27-ը: Հեռակա ուսուցման ստուգարքների ընդունումը կազմակերպել հունվարի 19-ից հունվարի 26-ը: Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանը անցկացնել փետրվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը: 2-րդ կիսամյակի դասերը սկսել մարտի 12-ից:

8. Հեռակա ուսուցման պարտքերի մարում սահմանել.

ա/ առաջին լուծարքային շրջան՝ մարտի 7-ից – մարտի 15-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ մարտի 22-ից – մարտի 30-ը:

9. Ուսումնական պլանով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաները սկսելուց 20 աշխատանքային օր առաջ պրակտիկայի բաժին ներկայացնել ուսանողների հրամանների նախագծերը:

2. Ֆակուլտետների կողմից ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

Սեպտեմբեր

- Մինչև սեպտեմբերի 1-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների դիմումները դեկանի մակագրությամբ և վճարման կտրոններով /ընդհանուր բաժնի մուտքի համարով/:

- Մինչև սեպտեմբերի 1-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև սեպտեմբերի 5-ը կազմակերպչական բաժնն ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների փոխատեղման արդյունքները:

- Մինչև սեպտեմբերի 8-ը կազմակերպչական բաժնն ներկայացնել 30-ից բարձր անապահովության միավոր ունեցող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տվյալները (տեղեկանք սոց. ապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկանք):

- Մինչև սեպտեմբերի 11-ը բակալավրիատի բաժնն ներկայացնել կուրատորների նշանակման ֆակուլտետային հրամանների պատճենները:

- Մինչև սեպտեմբերի 11-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժնն ներկայացնել 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տեսրերի քանակը՝ նշելով տեսրերի ծավալը (եջերի թիվը):

- Մինչև սեպտեմբերի 12-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքի արդյունքները:

- Մինչև սեպտեմբերի 15-ը պրակտիկայի բաժնն ներկայացնել ամուսնը անցկացված ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունները՝ կցելով պրակտիկան չանցած ուսանողների անվանական ցուցակները:

- Մինչև սեպտեմբերի 15-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել ԵՊՀ-ի առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների միջև կնքված պայմանագիրը 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև սեպտեմբերի 20-ը կազմակերպչական բաժնն ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների գործերը:

- Մինչև սեպտեմբերի 26-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքները:

- Մինչև 1-ին լուծարքի ավարտը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեղիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

Հոկտեմբեր

- Մինչև հոկտեմբերի 2-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուս. վարձի գեղշման դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Ուսանողներից դիմումների ընդունումը կազմակերպվում է դեկանատներում սեպտեմբերի 12-ից:

- Մինչև հոկտեմբերի 3-ը բակալավրիատի բաժին ներկայացնել ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:

- Մինչև հոկտեմբերի 12-ը մուտքագրել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասաւախտակը:

Նոյեմբեր

- Նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեղիտ առարկայական պարքերի վերահանձնման դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

- Նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 14-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեղիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև նոյեմբերի 14-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուս. վարձի գեղշման դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Ուսանողներից դիմումների ընդունումը կազմակերպվում է դեկանատներում սեպտեմբերի 12-ից:

- Մինչև նոյեմբերի 17-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:

- Մինչև նոյեմբերի 22-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել ԵՊՀ հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների միջև կնքված պայմանագիրը 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև նոյեմբերի 30-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեղիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

Դեկտեմբեր

- Մինչև դեկտեմբերի 4-ը կազմակերպչական բաժին (դիպլոմների սենյակ) ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների թեկնածուների ցուցակը:

- Մինչև դեկտեմբերի 8-ը բակալավրիատի բաժին ներկայացնել առկա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև դեկտեմբերի 15-ը կազմակերպչական բաժին (դիպլոմների սենյակ) ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների հրամանները:

- Մինչև դեկտեմբերի 15-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել ֆակուլտետի խորհրդում հաստատված առկա ուսուցման մագիստրոսական թեզերի դեկավարներին և թեմաների անվանումները:

- Մինչև դեկտեմբերի 15-ը կազմակերպչական (դիպլոմների սենյակ) և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցերը:

- Մինչև դեկտեմբերի 25-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստավորում շանցած ուսանողների ցուցակը:

Հունվար

- Մինչև հունվարի 12-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև հունվարի 19-ը մուտքագրել 2017/2018 ուստարված երկրորդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման դասատախտակները:

- Մինչև հունվարի 30-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34 ձեր՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

Ուկտոր՝

Ա.Հ. Սիմոնյան